№ 197 Հոկտեմբերի 23 (Նոյեմբերի 4) 1881 Հոկտեմբերի 23 (Նոյեմբերի 4) № 197

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաբարբարացիք գիտում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց խնդիր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ուսանողութիւն։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

„Journal d'Orient" լրագրի № 43 մէջ գտնում ենք մի յօդուած հայոց խնդրի մասին, որի դատողութիւնների հետ մենք կատարելապէս համաձայն ենք, միայն սխալ և անճիշդ ենք գտնում այդ յօդուածի թըւանշանները։

Մենք աւելի հաւանական ենք գտնում այն թւանշանները Հայաստանի ազգաբնակութեան մասին, որ ցոյց տուեցին իրանց յիշատակագրի մէջ Բերլինի կօնգրէսին ներկայացած հայ պատգամաւորները, նոյն թւանշանները, որոնք յիշված են և Գրիգոր Արծրունու դասախօսութեան մէջ։

Չորս վիլայէթների մէջ, որոնց համար խնդրվում է ինքնավարութիւն, կայ ընդամենը 2,062,300 հոգի բնակիչ, որոնցից 530,000 Թիւրքեր, 120,000 քիւրդեր 82,300 այլ և այլ ցեղեր, և ուրեմն 1,330,000 հայեր։

Հայերի այդ թւի մէջ հաշւում են, ի հարկէ, թէ գրիգորեան, թէ կաթոլիկ և թէ բողոքական հայերը։

Եթէ մինչև անգամ ընդունենք որ այդ մի միլիօն, երեք հարիւր հազար բնակիչների թւի մէջ ամփոփված են Հայաստանի բոլոր քրիստոնեաները, այսինքն այլ և այլ դաւանութիւնների հայերը, ասորեցիները և յոյները,—այն ժամանակ կունենանք Հայաստանի մէջ քրիստոնեաների մի ահագին մեծամասնութիւն, համեմատելով նոյն երկրի մահմեդական տարրի հետ։ Եթէ սրանց աւելացնենք 82 հազարից վեր առնելով կիսաքրիստոնեայ եզիդիներին և հրէաներին, որոնց միասին „Ժուրնալ դ'Օրիան" հաշւում է 26,000, կունենանք այսպիսով մի ահագին մեծամասնութիւն ոչ մահմեդական ազգաբնակութեան։

Ուրեմն եթէ Հայաստանի ազգաբնակութիւնը բաժանենք մահմեդականների և ոչ-մահմեդականների վրա, այդ վերջինները կը կազմեն ահագին մեծամասնութիւն, և կատարեալ իրաւունք կունենան պահանջել իրանց համար ինքնավարութիւն, իսկ մահմեդական փոքրամասնութիւնը ստիպված կը լինի ենթարկվել մեծամասնութեան իրաւունքներին։

Եթէ Հայաստանի ինքնավարութեան խնդիրը քննելու և վճռելու ժամանակ ընդունենք ոչ թէ կրօնական, այլ ազգային տեսակէտը, այն ժամանակ հայ-քրիստոնեաների հետ պէտք է միացնենք հայ-մահմեդականներին և այդպիսով դարձեալ կըստանանք ցեղական մի ահագին մեծամասնութիւն, համեմատելով հայաստանցի բուն Թիւրք և քիւրդ ազգաբնակութեան հետ։ Ուրեմն դարձեալ ցեղական տեսակէտից Թիւրքաց Հայաստանի հայերը կատարեալ իրաւունք կունենան պահանջել իրանց երկրի համար վարչական ինքնավարութիւն։

Ինքնավարութեան անհրաժեշտութիւնը Հայաստանի համար, ասում է Վիէննայի Թերթը, ճանաչված է արդէն ամբողջ Եւրոպայից։ Այդ անհրաժեշտութիւնը ընդունելով, հայոց խնդիրը լուծելու ժամանակ ինչ տեսակէտն էլ ընդունի Եւրոպան, կրօնական թէ ազգային, այսինքն ցեղական, —երկու դէպքումն էլ նա կունենայ այն տարրի մեծամասնութիւն, որ իրաւունք ունի իր համար ինքնավարութիւն պահանջել։ առաջին դէպքում կը կազմվի ոչ—մահմեդական մեծամասնութիւն, իսկ երկրորդ դէպքում մեծամասնութենից դուրս կը մընայ Թիւրք և քիւրդ փոքրամասնութիւնը։

Ահա ինչ է անհրաժեշտ հասկացնել եւրոպական դիպլոմատիային։ Ի հարկէ Թիւրքիան երբէք չի ուզենայ այդ տեսակ պարզ ճշմարտութիւնը հասկանալ։ Առաջին դէպքում, երբ խօսվում է Հայաստանի քրիստոնեաների վրա, Բ. Դուռը դիտմամբ մոռանում է յիշել և հայերի Թւին միացնել հայաստանցի միւս քրիստոնեաներին, երկրորդ դէպքում նա երբէք չի ընդունի որ կարող են հայ-մահմեդականներ լինել։

Բերլինի դաշնագիրը խօսում է հայերով բնակված նահանգների մասին։ Բայց երկու տեսակէտից էլ նայելով, կրօնական թէ ցեղական, մենք կը ստանանք՝ կամ քրիստոնեայ, կամ հայ մեծամասնութիւն. առաջին դէպքում բոլոր քրիստոնեաները, իսկ երկրորդ դէպքում հայերը, մահմեդական հայերի հետ միասին, կազմում են այդ նահանգների մէջ ազգաբնակութեան մի ահագին մեծամասնութիւն, որին և պէտք է տրվի ազատութիւն և կեանքի ապահովութիւն, դարևոր տանջանքներից և մարտիրոսական ճնշումից յետոյ։ Եւրոպան, վերջացնում է Ֆրանսիական Թերթը, չէ կարող մանակից լինել Բ. Դրան անխիղճ վարմունքին, որ հրաժարվում է կատարել իր յանձն առած պարտաւորութիւնները։

Գ. Ա.

ՖԵԼԻԵՏՕՆ

Հին ժամանակները մարդիկ երկար կապրէին, այն ժամանակները զարմանալի մի բան չէր երբ մէկը մի քանի դարեր ապրէր, բայց 19-երորդ դարում, հարիւր տարի ապրողին մատնացոյց են անում իբր մի հրաշալիք, ինչպէս մատնացոյց կանեն սուտ տեղը երդում չանող հայ վաճառականին։ Վերջը Աստուած, կամենալով կեանքերը կարճացնել և միանդամայն թոյլ չը տալ որ մարդիկ միմեանց միսը ուտեն, կենդանեաց միս ուտելու հրաման է տուել, և այն օրէն ի վեր մարդիկ սկսել են միս ուտելով զանազան տեսակ ախտերի և հիւանդութեանց ենթակայ ըլլալ, այսինքն կաթուածահար, դիւահար, բարակացաւ, հաստացաւ, գաղղիական ցաւ, տաճկական ցաւ, հայկական ցաւ և այլն։

Սրանից հետևում է, որ բոլոր հիւանդութեանց սկզբնապատճառը միսն է, ինչպէս մեր նախահարց սկզբնական մեղքը խնձոր ուտելն էր. բայց ընդհակառակը, արդի բժշկականութիւնը հաստատում է թէ, միսն է մարդուս կենսատու սնունդը թէ առողջ և թէ երկար ապրելու համար, ինչպէս հաստատում են դիւանագէտք որ աշխարհիս խաղաղութիւնը Արևելեան հարցին լուծումէն կախում ունի։

Շատ ժամանակէ ի վեր եւրոպական զանազան քաղաքներում հետզհետէ հակամսական ընկերութիւններ կազմվում են, ինչպէս ստէպ ստէպ կազմվում են ազգային ընկերութիւններ հայերի մէջ. սրանց անունն է Բանջարակերաց ընկերութիւն, (ազգային ընկերութիւններ չը հասկանաք) société végétarienne։ Սորա նման մի ընկերութիւն էլ Վիէննայում հաստատված է, որոնց կերակուրների մէջ բնաւ միս չըլլալէ զատ, քացախ, գինի, աղ, պղպեղ, լիմոն, ձէթ, համեմունք մի բան չը կայ, այլ լոկ բակլայ, ոսպ, սիսեռ, լուբիա, սոխ, սխտոր, խոտ, դալարիք, ընդեղէն և այլն է կերածնին, և խմածնին միայն ջուր, ինչպէս ապրում էին մի ժամանակ Վարք սրբոցի անապատականները և կամ մեր արդի վանականները....

Այս խոտակերաց բուն նպատակը երկար ապրելու համար է, սակայն ես, ընկերութեան անդամներից մի քանիսին ծանօթ լինելով, դժբաղդաբար տեսնում եմ, որ սրանց երեսին վրա երկար ապրելու մի նշոյլ չը կայ, ընդհակառակը ամենքը գունատափ, ուժաթափ, կիսամեռ մարդիկ են, ինչպէս Կ. Պոլսոյ ազգային հիւանդանոցի անօթի ծարաւ պատսպարեալները։

Ես ևս երկար ապրելու փափաք ունենալով, ոչ թէ կեանքը սիրելուս համար, այլ երկար ապրելով հայկական հարցին լուծման ակնատես լինելու արժանանալու համար, փորձեցի յիշեալ ընկերութեան մասնակցել, բայց մի ամիս չանցաւ, վրաս քալելու ոյժ չը մնաց, ծնկներս սկսան դողդողալ, ինչպէս հայ մը կը դողդողայ քուրդ մը տեսած ժամանակը. վերջապէս տեսայ որ եթէ խոտ ուտելը շարունակեմ, ոչ միայն հայկական հարցի լուծվելուն, այլ 61-երորդ յօդուածին համար Կ. Պոլիս կայանալիք դեսպանաց ժողովին երկրորդ նստին անգամ չը պիտի կարողանամ հասնիլ, ուստի ստիպվեցայ հրաժարիլ ի մեծ ցաւ խոտակեր ընկերութեան անդամոց և ի մեծ ուրախութիւն մսակեր բարեկամաց, որոնք դիս արդէն խոտաճարակ մահվան դատապարտված կը համարէին, ինչպէս եւրոպական տէրութիւնք դատապարտած են օսմանեան կառավարութիւնը անբուժելի հիւանդութեան։

Շատ հաւանական է, որ այս ընկերութիւնները արտասովոր օրինակներից, այսինքն լրագիրների մէջ մերթ ընդ մերթ տեսնված երկարակեաց տարածոց երջանկութենէն յափշտակվելով ուզում են զոցա նման երկար ապրելու ճարը գտնել, առանց գիտնալու թէ այս երկարակեացները ոչ թէ լուբիա ուտելով և միս չուտելով երկար ապրում են, այլ բնութեամբ ամուր կազմուածք ունենալով, որուն եթէ աւելացնենք չափաւոր մի կեանք վարելու պայմանները, այն ժամանակ կը համոզվենք թէ երկար ապրելը բանջար ուտելուն մէջ չէ։

Նորերումս ֆրանսիական լրագիրները մի արտաքոյ կարգի երկարակեաց կնոջ պատմութիւնն են անում։ Այս նորատեսիլ տիկին Մաթուսաղան այցելելու համար Ֆրանսիայի ամեն կողմից գալիս են։ Կինը այրի է, անունն է Մադամ Ժորժ, ծնած է 1766 ապրիլի 21-ին, Լուզի քաղաքում, և այսօր 116 տարեկանից աւելի է։ Ապրած է Լուի XV-ի ժամանակ, տեսած է Լուի XVI թագաւորը, տեսած է la Révolution (յեղափոխութիւն), la Terreur (երկիւղի իշխանութիւնը), le Directoire (Հնգերի ժողովը), le Consulat (հիւպատոսութիւնը), l'Empire (կայսրութիւնը), la Restauration (վերահաստատութիւնը) *) Շարլը X-ը, Լուի Ֆիլիպը, 1843-ի հասարակապետութիւնը, Նապոլէօն III-ի կայսերութիւնը, և երրորդ հասարակապետութիւնը. (բարեմաղթենք որ հայկական հարցին լուծումն էլ տեսնէ, բայց անյուսալի է, ոչ թէ լուծումը, այլ իրան ապրիլը)։ Ներկայ գտնված է Ֆրանսիայի երեք արշաւանաց, և տեսած է երեք թագաւորութեանց, երկու կայսրութեանց և երկու հասարակապետութեանց կործանումը։ Գալով անձնական առողջութեան մասին, ականջի ամենաթեթև խլութիւնից զատ ուրիշ տկարութիւն չունի, անունը առանց ակնոցի կը ստորագրէ, և տան մէջ ծառայ չունենալով ամեն պէտք եղածը ինքը կը հոգայ։ 40 տարի առաջ մազերը սպիտակացած են եղել, իսկ այժմ մոխրագոյն են, սա ևս շատ տարօրինակ է։ Ունի թոռան թոռների զաւակներ, մի փեսայ ունի 92 տարեկան, ինքը 67 տարի է, որ այրի մնացել է, 2 տարի էլ ապրելու լինի ճիշդ 100 տարի պիտի լինի ամուսնանալը։ Մահը բնաւ մտքիցը անգամ չի անցկենար, ամենքին ասում է թէ հոգեհան հրեշտակը զինքը տեսարակի մէջ արձանագրելու մոռացած է։ Անցեալ օրեր փոքր ինչ մրսելով հարբուխ է ստացել, ժողովրդապետը և բժիշկը այցելութեան գնացել են հոգեոր և մարմնաւոր պիտոյքը հոգալու համար։ Կինը չափազանց կատղել է և այսպէս ասել։ Պարոններ, դուք սխալվում էք, ես մեռնելու փափագ չունիմ և կարող եմ ձեզ երկուսին էլ թաղել. հետևեալ օրն էլ արդարև բոլորովին առողջացել է։ Հետաքրքիր այցելուները հաստատում են թէ այս տարօրինակ կինը կենդանի պատմութեան մի գիրք է, իր զարմանալի սուր յիշողութեամբը ամեն հարցերի պատասխանելու պատրաստ։ Հարցրել են թէ ինչ գաղափար ունի Լուի XVI-ի մահուան համար. հանդարտութեամբ պատասխանել է թէ ըստ արժանւոյն գլխատված է, բայց ինքն էլ շատ նեղութիւն է կրել 1793-ի յեղափոխութեան ժամանակ։ Պատմում է թէ իր հօրեղբայրը ի մահ դատապարտվել է և գլխատվել է իր տանը չանը citoyen (քաղաքացի) անունը տալուն համար։ Նմանապէս մօրեղբայրը գլխատման դատապարտվել է խոզերին գարի ուտեցնելուն համար։

Վերջապէս այս կինը 100 տարի առաջ մի գանգատ է տուել դատաստանական ժողովին, որուն համար պատմում ինքը թէ այն ժամանակվայ դատաւորները ինչ կերպ վճիռ կայացրել են։ Լրագիրը վերջացնում է յօդուածը, աւելացնելով թէ, այսօր Ֆրանսիայում այնպիսի նորանշան կին մը գոյութիւն ունի, որուն դատը վաղեմի աւազակմբի տեսանին առաջը տեսնված է։

* * *

Ունգարական լրագիրք մի անհաւատալի լուր հրատարակեցին։ Օսմանեան կառավարութիւնը Վիէննայի պատերազմական նախարարութեան դիմել է, որ այս վերջինը պէտք եղած հրահանգը տայ, Դըմբշվարի մէջ այլ և այլ տեղեր փորել տալու և մի գանձ գտնելու համար, զոր՝ Սելիմ անունով Դըմբշվարի վերջին բաշան, 1716-ին, նախ քան Դըմբշվարից փախուստը, գոմէշի մորթի մէջ դնելով այնտեղ թաղած է եղել։ Այս թաղումը տեղի է ունեցել, երբ օսմանցիք իշխան Էօժէնի արշաւանքից հալածվելով փախել են։ Սա առաջին անգամը չէ, ասում է լրագիրը, որ օսմանցիք Աւստրիոյ կառավարութենէն այս գանձը պահանջել են, 1865 թուականին էլ այսպիսի մի պահանջողութիւն եղել է, իբրև մի վերջին փորձ, բայց աւելորդ է ասել, որ այն ժամանակն էլ ոչինչ յաջողութիւն չէ ունեցել։

Ցաւալի բան է. օսմանեան կառավարութեան ամենեին մի բան տուող չը կայ, ամենքը նրանից են պահանջում, երկիր, փող, տոկոս, անկախութիւն, բարենորոգում, և այլն, ինքն էլ ճարը

*) Սոքա ֆրանսիայում հետզհետէ միմեանց յաջորդող զանազան իշխանութեանց տիտղոսներն են։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

—

Ի մօտոյ ծանօթացած լինելով Մոսկվայի համալսարանական հայ ուսանողութեան հետ, աւելորդ չեմ համարում ծանօթացնել „Մշակի“ ընթերցողներին այս հետաքրքիր աշխարհիկի հետ, որ հեռուից միշտ երևացել է, իբրև մի նուիրական աշխարհ։ Մենք ամենքս ուսանողների վրա խօսելիս, սովորութիւն ենք արել մեզ կրկնել միշտ մի և նոյն ֆօրմուլան, թէ „ուսանողութիւնը է մեր բոլոր յոյսը, նա պիտի լինի մեր վերքերը դարմանող հմուտ բժիշկը“ և այլն և այլն. ես ի հարկէ բոլորովին ոչինչ չունեմ ասելու այս յոյսերի դէմ, բայց թող ներվի ինձ ասել, որ այս յոյսերը բոլորովին դատարկ պիտի անցնեն, մինչդեռ հայ ուսանողութիւնը կը գտնվի այն դրութեան մէջ, որի մէջ նա այժմ է գտնվում։ Ամենապարզ ապացոյց սորան կարող են լինել այն հարիւրաւոր ցիլինդրաւոր անպէտք պարոնները, որոնցով լի է Թիֆլիսը և որոնց անտանելի անտարբերութիւնը դէպի ամեն մի հասարակական հիմնարկութիւն արտաբուրում է միայն թոյն և լեղի. սակայն իր ժամանակին այս բոլոր պարոնների վրա դրված են եղել, իբրև ուսանողների վրա, նոյն մեծ մեծ յոյսերը։ Փորձենք պարզել այն գլխաւոր պատճառները, որոնք կարողացել են և պիտի կարողանան ծնել այսպիսի հասարակական ժամանակաւոր պարազիտներ (մշտական սև սև պարազիտների մասին յետոյ)։ Գիմնազիայի վկայականը բաց է անում գիմնազիսաի առաջ համալսարանի լայնատարած դռները. գիմնազիստը դառնում է ուսանող և ընկնում է ուսանողական լայն—ազատ աշխարհը. այնուհետև բացվում է նորա առաջ մի նոր կեանք։ Գիմնազիօնական նեղ կեանքից ամեն միջոցներով, ներելի թէ աներելի (աներելի միջոց այստեղ շատ քիչ կայ) հազիւ հազ ազատված, նա այժմ բոլորովին ազատ մարդ է զգում իրան, նա աշխատում է ոչ մի բաւականութիւնից չը զրկել իր անձը. այժմ համալսարանը երկրորդական բան է դարձել նորա համար. նա ամբողջ գիշերը անցնում է կամ թատրօնում, կամ տրակտիրում և այլ այսպիսի զանազան հասարական տեղերում։ Այս ամեն բաւականութիւնների մէջ նա մենակ չէ, նա վաղուց արդէն գտել է իր համար մի ընկերուհի այն պարկեշտ ուհիներից, որոնցով լի են Մոսկվայի զբօսարանները կամ նոյն իսկ փողոցները... և որոնք մի տգամարդ որսալու մէջ շատ հմուտ ու փորձված են. թէև ուսանողական կանօնների մէջ ասված է, որ ուսանողի առաջին պարտականութիւնն է ճշտութեամբ յաճախել լէկցիաները (դասախօսութիւնները)։ Բայց այս կէտը շատ անգամ մեռած տառ է մնում և ուսանողը բոլորովին կօնարօլ չունենալով իր վրա, գործում է ամեն բան ինչպէս կամենում է։ Նա զարթնում է ուղիղ 10-ին կամ 11-ին, երբ համալսարանում մի կամ երկու լէկցիաներ արդէն վերջացրել են, թէյ է խմում մինչև 12-ը, յետոյ միայն գնում համալսարան и завтра то же что вчера—ասենք բառնասեղծի խօսքերով։ Բայց ահա՛ վրա հասան քննութիւնները. ուսանողը կորցրել է իր գլուխը. նա պիտի երկու-երեք շաբաթում պատրաստէ ամբողջ կուրսը, որպէսզի քննութիւն կարողանայ բռնել. թէ որքան անտանելի է ուսանողի այս դրութիւնը, շատ հեշտ է երևակայել և քննութիւնից յետոյ դուք կը պատահէք ուսանողին նիհարացած, գունատ, թոյլ, վերջապէս համարես կմախք դարձած, չեմ յիշում դեռ զանազան կողմնակի միջոցները, որոնց թոյլ է տալիս իրեն անհեռատես ուսանողը քննութիւնների ժամանակ։ Դիցուք թէ ուսանողին յաջողվեց անցնել առաջիկայ կուրսը. հարցը այժմ նրանումն է. բան գիտէ՞ արդեօք նա.—համարձակ կարելի է ասել՝ ո՛չ. որովհետև նորա գլխում հաւաքվել է մի սարսափելի խաօս, ամեն բան նրա գլխում խառնափնթոր դրութեան մէջ է, դիզված առանց կանօնի, առանց որ և է սիստեմայի։ Ոչ մի գիտութիւն նա չէ մարսել կամ ինչպէս ասում են միս և արիւն դարձրել, որը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մարդ պարապում է գիտութիւնով կանօնաւոր կերպիւ, հետևողական մեթօդայով, և ոչ թէ բեռնաւորելով միանգամից իր միտքը փաստերի և տեղեկութիւնների մեծաքանակ ու անմարսելի կոյտերի ծանրութեան տակ։ Եւ այս շատ բնական է, որովհետև անկարելի է երկու շաբաթում անել այն, ինչ որ ուրիշները հազիւ հազ կարողանում են ութ ամսում լրացնել։ Քանի որ այս ամենը այսպէս է, մենք ամենևին չը պէտք է զարմանանք այն տխուր երևոյթի վրա, որ իւրաքանչիւր տարի բաւական քանակութեամբ „դիպլօմ“ ստացող հայ երիտասարդների մէջ, հազիւ պատահում են մի երկու-երեք ազնիւ պարօններ, որոնք ճշտութեամբ հասկանում են իրանց պարտականութիւնները և հիմնաւորապէս գիտեն իրանց ընտրած մասնագիտական գիտութիւնները. իսկ մեծամասնութիւնը, որ սովորել է միայն դիպլօմի համար, մտնում են հասարակութեան մէջ առանց որ և է բարոյական իդէալների, մտածելով միայն իրանց սեփական շահերի վրա. նոցա իդէալն է այնուհետև ապահովել իրենց «տեղը նիւթական կողմից և ահա մի ամբողջ շարք ինտրիգաների և զանազան մշտական խարդախութիւնների, որոնցից կազմվում է նոցա աննպատակ ու անմիտ կեանքը. և գտնվում էին դեռ ևս մարդիկ, որոնք մեղադրում էին „Մշակ“-ին, երբ նա անխնայ մտրակում էր այդ ցիլինդրաւոր դիպլօմաւորներին, մինչդեռ եթէ նոքա գործի ներքին դրութիւնը հասկացած լինէին և ոչ թէ արտաքին տեսքով գրաւված՝ կը տեսնէին իրանց սխալը և չափաւոր կը լինէին իրենց անտեղի ու անհեթեթ պատճառաբանութիւնների մէջ։ Բայց առ այժմս բաւականանանք այսքանով։ Անտեղի չեմ համարում աւելացնել և հետևեալը. իմ խօսքս, ի հարկէ, չէ վերաբերում այն լուսաւոր բացառութիւններին, որոնք սիրահարված գիտութեան վրա, պարապում են ամենայն ջերմեռանդութեամբ, որպէս զի մի օր կարողանան ճիշտ հաշիւներ ներկայացնել հասարակութեանը հետևաբար և ամբողջ մարդկութեանը, իրանց մասնագիտութիւնների վերաբերութեամբ։ Այդպիսիներին խունկ խնկել և պաշտել պատիւ կը համարէինք մեզ։ Բայց ինչ անենք. մի՞թէ երկուսերնք ծաղկով գարուն կը լինի։

Մոսկվա Ա. Կ—եանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Չորեքշաբթի օր, հոկտեմբերի 21-ին պ. Ա. Երիցեան կարդաց Արծրունու թատրօնում իր առաջին դասախօսութիւնը «Պատմական տեսութիւն հայոց գրականութեան» մասին։ Թատրո-

---

հատած, ինչ անէ, սկսել է հին թաղված գանձերը պահանջել։

Եթէ այս բանը յաջողված լինէր, լոյս էր իջած հայերի գլխին. Հայաստանի աւերակաց մէջ ինչ պահված գանձեր կան, որոնք ժամանակաւ թաղված են ապագայ սերունդին վիշտերը մեղմացնելու համար, բայց մարդ չը գիտեր որ սատանային ծակն են մտած այդ ամեն գանձերը, միայն հնագէտները գիտեն, սոքա ևս այն պայմանաւ, որ մի տեղ փորած ժամանակին եթէ յանկարծ պատահմամբ մի բան դուրս գայ, և կամ ուրբաթ չորեքշաբթի միս չուտող բարեպաշտ քրիստոնեայ մը երազումը հրեշտակ պիտի տեսնէ, որ նա իմաց տայ թէ այս ինչ տեղը պահուած գանձ կայ։

* *

Զը գիտեմ ստոյգ է թէ անստոյգ, բայց շատերն ասում են թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը հայերին քրիստոնէութեան դարձրած ժամանակը հայկական բոլոր հին և նոր պատմական մատենագրութիւնները հրապարակաւ այրել է, ինչպէս մի ժամանակ հաւատաքննիչները հերետիկոսներին կայրէին. այնպէս որ Մովսէս Խորենացին հազիւ հազ քանի մը այրված թղթի կտորներից՝ «Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակոբ, Յակոբ ծնաւ զՅովսէփ»-ի նման մի պատմութիւն կարողացել է չինել առանց ընդարձակ տեղեկութեանց։ Սրան էլ պէտք է փառք տանք, որովհետև քիչ շատ հայոց պատմութիւնը և լայնածաւալ Հայաստանը կեցած լինելով հանդերձ, դարձեալ Հայաստանին Բուրդիստան, Ասորեստան, չը գիտեմ ինչխաթան ասողներ կան, եթէ այս ապացոյցներն էլ չը լինէին, եթէ ոչ անհնարին, գէթ դժուարին կը լինէր հայութեան վրա օտարներուն մի գաղափար կազմել տալը։

Յակաւին Եւրօպայում այնպիսի մարդիկ կան որ չեն իմանում թէ հայը ինչ բան է, մինչև անգամ կարծող կայ, որ հայը վայրենի է։ 60 տարի առաջ ճշմարիտ վայրենի և մարդակեր, իսկ այժմ քաղաքակրթեալ Սանտվիչ կղզեաց Բալաքուա թաղաւորը անցեալները Վիէննա եկած էր. Վիէննայում, մինչ յետին նպարավաճառը գիտէր նորա ինչ ազգի պատկանիլը, իսկ հայը 4000 տարուան ազգ է, տակաւին ամբողջապէս չէ ծանօթ լուսաւորեալ աշխարհին...։ Բայց գոնէ ծանօթացնելու պաշտօնը յանձն առնող անձանց աշխատութիւնները պէտք է պակել, ինչպէս զորօրինակ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի զոհաբերութիւնները։

Ճշմարիտ անհաւատալի է յիշեալ լրագրի բաժանորդագրութեան մասին Կ. Պոլսոյ ազգայնոց անտարբերութիւնը, կարծես թէ ուխտ արած են լրագիրը անպատճառ ձրի կարդալու։

* *

«Ժուրնալ դ'Օրիան» լրագիրը, ինչպէս վերը յիշեցի, ոչինչ չէ խնայում և—թող կարդացողները դատեն—գովելի հաստատամտութեամբ շարունակում է պաշտպանել հայերին, և կանոնաւորապէս ձրիաբար ուղարկում է մօտ 200 համարներ ի Կ. Պոլիս, որոնցից հազիւ հազ 20 հատ բաժանորդագրենը վճարված բաժանորդներ կան։ «Ճէրիտէի Հավատիս» տաճկական լրագրի մատնութեամբը լրագրին մուտքը արգելվեցաւ, պատճառը, որովհետև խմբագրապետը ճշմարիտը խօսեց. Թրքերի համար այնքան կծու և խայթիչ բան չը կայ որքան ճշմարտախօսութիւնը, թէև իրենց շահուն համար մարդ ճշմարիտը խօսելու լինի, ինչպէս մի ժամանակ «Մշակ»-ին մուտքը արգելեցին օսմանեան կառավարութեանը խելօք խրատ և բարի խորհուրդներ տալու յանդգնելուն համար։

Ֆրանսիացի խմբագիրը, հակառակ արգելման՝ որ և է հրաշագործութեամբ կրկին լրագիրը պօլսեցւոց կարդացնելու յաջողում է։ Այս անգամ տարակոյս չը կայ, որ սոքա խղճմտանքի գալով, բաժանորդագինները ուղարկելու կաճապարեն, ոչ թէ խմբագիրը վարձատրելու, այլ գոնէ հրաշագործութեան արտաքոյ կարգի ծախքերը դիմադրելու համար։

Լրագիր մը բանաստեղծութիւններով և քերթուածներով չէ կարելի նպաստել, փող է հարկաւոր, փող, այսինքն Կ. Պոլսոյ լեզուով փարայ, բայց ում կը հասկացնես, անհաւասիկ մի երկրորդ խօսակցութիւն։

—Բարև, սիրելիս, նոր ազգային ինչ լուր ունիք։

—Ո՛հ, բարեկամ, ուրախ եմ ձեզ տեսնելու, կը ցանկանայի բոցավառ սիրտս մի բարեկամի բանալով փոք ինչ զովանալ։

«Թէ իմն հայրենեաց պաշտպան սգաւոր, Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիանն» էր այն, ով անգութ անխիղճ մեր ճակատագիր, մուտքը արգելված լրագիրն է այն։

* *

Թէ մեր ազգութեան միակ բարերար....

—Կայնէ, ախպար, ինչ ըսել կուզես կոր։

—Ո՛չ, բարեկամ, կայնելու ժամանակ չունիմ, աւաղ, տաղաչափութեան կապս կորուսի...

—Դու խելքիդ կապն ալ կորուսեր ես, մարդու պէս չը խօսիս, ինչ կայ։

—«Ժուրնալ դ'Օրիանը» արգելեր են... ո՛հ, ինչ նախագիծներ ունէի, այդ դիւցազն, վեհանձն և.... Ա՛հ, ածականս պակեցաւ.... Վերջապէս այդ անձնուէր մահկանացուին աշխատութիւնը պիտի պակէի։

—Ախպար, պակդ քեզ պահէ, փարայ տուր փարայ։

—Ո՛հ, փարայ չը կայ, բայց եթէ խմբագրապետը իր մահկանացուն կնքէ, և ես կենդանի մնամ, ով երկինք, այժմէն պատրաստած եմ դամբանական ճառ մը։

—Ախպար, մի պօռար, ճանըմ, քիչ մը կամաց խօսէ։

—Ի՞նչ կայ։

—Նիկողոսեանը կուգայ կոր....

* *

—Ախպար, սըկէց 20 ֆրանկ տուր։

—Ի՞նչի փարայ է։

—Իշթէ քեզի անդորրագիր. «Ժուրնալ դ'Օրիանի» տարեկան բաժանորդագինը։

—Գնա բանդ Աստուածդ սիրես, ինձի փորձանքի պիտի հանդրպցընես, արգելեալ լրագրին խենթ չեմ բաժանորդ գրուեմ։

—Ծօ ինչ կը վախնաս կոր, անցած օր ազգին համար կեանքս կուտամ կըսէիր կոր։

—Դուն անոր մի նայիր, անիկայ ամենքս ալ կըսենք, ծօ թուղթը պահէ զաբթիյէ կուգայ կոր, հիմայ քեզի ալ կը բռնեն, ինձի ալ։

—Եթէ փարայ չես ուզեր տալ, գոնէ յօդուած գրէ խրկէ խմբագրին։

—Ջեմ կրնար, կը վախնամ կոր, կը վախնամ կը հասկընաս, յօդուած գրեմ, վերջը իմացուի, ինձի կախեն, անմնկ չէ, ես Նիկողոսեան չեմ, ան Մոսկովցի է, չը վախնար։

—Ծո՛ կախեն նէ թող կախեն, քանի անգամ պիտի մեռնիս։

* *

—Բարեկամ, սա թուղթը ստորագրեցէք, կաղաչեմ։

—Ի՞նչ թուղթ է։

—Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի խմբագրին ներկայացնելու համար, շնորհակալութեան մի ուղերձ պատրաստեցինք, շատ լաւ գրված է, անմահ գրասէրն մեր պ. Զարմայրի գրիչն է, գիտէք որ անոր գրչէն արիւն կը կաթէ։ Այս ուղերձը այնպէս հանճարով շարադրված է, որ խմբագիրը այլ ևս փարայ չը պահանջեր ի նպաստ մեր հայկական հարցին։

—Շատ լաւ, եթէ փարայի և քաղաքականութեան դպչելու բան չը կայ, մեծաւ ուրախութեամբ կը ստորագրեմ։

* *

Թիֆլիսի հնագիտական ժողովի մէջ, նորագէտ մի պարոն կարսին, հին Վրաստան է ասել, որովհետև սրա աւերակների վրա վրացերէն արձանագրութիւններ կան եղեր։ Թիֆլիսում միլիօնաւոր գինիի չիչեր կան, որոնց ամենքին վրա «Կախէթինքիի վինօ» գրված է, սակայն չենք կարող հաւատալ որ պարոնը նոյն համոզումը ունենայ գինիների մասին։ Ափսոս որ հնագիտական ժողովը փակվել է, եթէ այնտեղ լինէի, ժողովին ներկայացնելու յարմար և շատ հին մի բան կար, ընթերցողը կարելի է գուշակեց։

—61-որդ յօդուածը։

Կրռօ

նում բաւական ժողովուրդ կար։ Այսօր ուրբաթ օր, 23-ին հոկտեմբերի կը կայանայ նոյն թատրոնում պ. Երիցեանի երկրորդ դասախօսութիւնը։ Իսկ նրա երրորդ և չորրորդ դասախօսութիւնները լինելու են 28-ին և 30-ին այս ամսի։ Սկիզբը $7^1/_2$ ժամին երեկոյեան։

—

Պ. Երիցեանի դասախօսութիւնների տոմսակները միասին և առանձին, կարելի է ստանալ պ. Ծատուրեանի խանութում և Արծրունու թատրոնի կասսայում։ Գներն են 1 ռուբլից սկսած մինչև 15 կոպէկ։

—

Լսում ենք որ ռուսաց «Кавказъ» լրագիրը մի այլ խմբագրին երեք տարի ժամանակով տալու համար կազմված է Գլխաւոր Վարչութեան մէջ մի յանձնաժողով, որ արդէն մշակել է լրագրի պրոգրամի ծրագիրը։ Լսում ենք որ այդ պաշտօնական թերթի խմբագրի պաշտօնը յանձն առնելու համար չորս կանդիդատներ կան, որոնցից երկուս ռուսներ են, մի հայ և մի վրացի։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են։ «Քաղաքիս փողոցները անմաքուր են պահվում։ Զը նայելով որ քաղաքային գումարից 400 ռուբլ տարեկան յատկացրած է քաղաքի մաքրութեան համար, այնու ամենայնիւ Ախալքալաքը մնում է նոյն անմաքրութեան մէջ և յայտնի չէ թէ ինչ բանի վրա է գործ դրվում վերև յիշված գումարը։ Լաւ կը լինէր որ քաղաքային բժիշկը ուշադրութիւն դարձնէր այդ անմաքրութեան վրա առողջապահական տեսակէտից»։

—

Մեզ գրում են Ախալքալաքի գաւառից։ «Վարեվանի հասարակութեան մէջ կան միայն երկու վրացախօս հայ-կաթոլիկ գիւղեր, Խիզապաւրա և Վարկավ։ Իսկ մնացած գիւղերում բնակվում են հայ-լուսաւորչականներ և հայախօս հայ-կաթոլիկներ։ Հասարակութիւնը որոշում է երկու գիւղական ուսումնարան բանալ։ Եւ ահա բացվում են ուսումնարաններ մին Խիզապաւրա, իսկ միւսը Աղաստան հայախօս գիւղում։ Բայց յայտնի չէ թէ ում շնորհով երկու դպրոցներին էլ ուղարկում են երկու վրացի ուսուցիչներին. 700 ռուբլ ռոճիկով և ահա հայերի և հայ-կաթոլիկների զաւակները 20—30 վերստ պէտք է ճանապարհորդեն որպէս զի իրանց համար անծանօթ, վրաց լեզուով դասաւանութիւն լսեն։ Լաւ կայ որ հասարակութիւնը մտադիր է վճիռ կայացնել, տեղական բարձրագոյն իշխանութեանը խնդրելու, որ դարձեալ բացվեն երկու ուսումնարաններ հայ ազգաբնակութեան համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 8 հոկտեմբերի

Միացեալ ընկերութեան վերջին մի քանի ամիսներու մէջ ստացած փոփոխութեանց մասին չը փութացինք տեղեկութիւն հաղորդել պատուական Մշակին, զի դեռ այս փոփոխութիւնք վերջնական ձև մ'առած չէին։ Այժմ որ այդ ձևն ստացան, կուզանք հարկ եղած բացատրութիւնքը տալ մեր ռուսահայ եղբարց, որպէս զի չը խաբուին Մեղու Հայաստանի մէջ հրատարակուած Սօսիւն, Քննիչ և ուրիշ ստորագրութեամբ պօլսական թղթակցութիւններէ, որոնց հեղինակաց ինչ ոգւոյ ծառայելն քիչ մը ետքը պիտի տեսնենք։

Այն վարչութիւնը, որոյ գլուխն էր պ. Թորոսեան անուն երուսաղէմացի էֆէնտի մը, իւր ապիկարութեամբ, աննչանութեամբ և չահախնդրութեամբ զզուանք ազդած էր ամենուն, բացի ազգականներէ և գործիքներէ։ Ընկերութեան երեսփոխանք ընտրութեան օրէն ի վեր կը քննադատէին և կը դատապարտէին զայն ամեն նիստի մէջ, այլ զօրաւոր մղում մը պէտք էր զայն տապալելու համար։ Այս մղումը եկաւ Ռուսաստանէն, երբ Մշակի աշխատակից պ. Գ. Նիկողոսեան արիասիրտ երիտասարդը Կ. Պոլիս եկաւ և յանուն Մշակի և ռուսահայոց խօսելով, որոնց նուէրները վայելած են միշտ Արարատեան, Դպրոցասիրաց և Կիլիկեան ընկերութիւնք և ասոնց յաջորդ Միացեալ ընկերութիւնն, պահանջեց որ ընկերութեան սանձը կարող ձեռքերու յանձնուի։ Թորոսեան, Շիշմանեան, Վասիլեան և իրենց կուսակիցք չատ մեքենայութիւններ ըրին իրենց պաշտօնը պահպանելու համար, այլ հարուածը զօրաւոր էր, և պարսաւանաց և անվստահութեան քուէ առաջարկուելով և ամբաստանագիր կարգացուելով իրենց դէմ կեդրոնական ժողովոյ մէջ, պաշտօնանկ եղան։ Այս թուականէն ի վեր սաստիկ ոխ պահած են զիրենք տապալողներուն դէմ, այսինքն Մշակի, պ. Նիկողոսեանի, պ. Փեշտիմալճեանի, պ. Ջերազի և այլոց դէմ, և ամեն առթիւ կը ջանան իրենց անձնական վրէժը լուծել ամենախարդախ միջոցներով։ Ցաւալի է որ Ռուսաստանի մէջ Մեղուն գործիք կը լինի իրենց այս ոխակալութեան և իւր էջերը կը բանայ խիստ յարգելի անձերը նախատող և զրպարտող թղթակցութեանց, որոնց թելադիր եղած են լոկ անձնական կիրք և անձնական շահ։

Այս պարտեալ Տնօրէն ժողովը այսօր առիթ գտած է իւր յաղթականաց դէմ աղաղակել, Վանայ վարժապետանոցին փակումը իրեն զէնք ընելով։ Ժողովուրդը, խնդրին պարագաները չը գիտնալով, կրնայ մոլորիլ և կարծել թէ արդի Տնօրէն ժողովը վեհասակար գործ մը կատարած է դպրոց մը փակելով։ Ուստի խնդիրը լուսաբանելու համար պէտք է որ մանրամասնութեանց մէջ մտնենք։

Մշակի խմբագրական յօդուածները, պ. Նիկողոսեանի, պ. Փեշտիմալճեանի և պ. Ջերազի համոզումները կը պահանջէին որ Միացեալ ընկերութեանց ուղղութիւնը բարեփոխուի և աւելի օգտակար լինի ազգի անմիջական պիտոյից։ Ուստի կը քարոզէին անդադար բարձրագոյն կրթութեան տեղ նախակրթութիւն ծուալել Հայաստանի մէջ և դպրոցներու ուսանելեաց կարգը դասել արհեստական զարգացման ճիւղն ալ։ Երբ անցեալ Տնօրէն ժողովը կործանեցաւ և պ. Փեշտիմալճեան ընտրուեցաւ առանապետ, սա վիրաբուժի յատուկ ազդուութեամբ իսկոյն առաջարկեց Միացեալ ընկերութեան երեսփոխաններուն որ իրենց ուղղութիւնը փոխելով նախակրթական և արհեստական ուղղութիւն ընդունին. երեսփոխանք պատրաստուած չէին այս նոր գաղափարաց և մերժեցին, որով պ. Փեշտիմալճեան հրաժարեցաւ։

Այս անգամ առենապետ ընտրուելով պ. Մինաս Ջերազ, որոշեց անդգալի կերպով և դիւանագիտութեամբ հանել ցանկացած նպատակին։ Ուստի, հինգ ամիս իւր պաշտօնը շարունակելէ և ընկերաց միտքը պատրաստելէ յետոյ, կեդրոնական ժողովին առաջարկեց նախակրթութիւն ընդունել, և այս առաջարկը երեք նիստերու մէջ վիճաբանելէ յետոյ վերջապէս ընդունուեցաւ 5 քուէի դէմ 23 քուէով։

Այս ջերմ վիճաբանութեանց մէջ էր որ պ. Ջերազ ստիպուեցաւ երևան հանել պաշտօնապէս այն հաշուական և դրամական դեղձումներ, զորս գործած էին Շիշմանեան, Վասիլեան և ընկերք, դեղձումներ որոնց դէմ արդէն ազդուապէս բողոքած էր պ. Նիկողոսեան և նախորդ վարչութեան անդամք անհրեսաբար յարձակած էին իւր յայտնած ճշմարտութեանց դէմ։ Պ. Ջերազ չէր ուզած ի սկզբան ամեն բան խօսել և յայտնութիւններ անել, կարծելով թէ վատ տպաւորութիւն պիտի անէ ընթերցողաց վրայ և ընկերութեան վարկին վնաս է. բայց երբ Սօսիւնի դաշնակիցներն սկսան բղաւել, պարտաւորուեցաւ յայտնել թէ տարեկան 6,000 ղրուշ իրենց անձնականին յատկացուցած էին Շիշմանեան և ընկերք և 2,000 ղրուշ ալ յիմար ծախքերու յատկացուցած, որով արդի վարչութիւնը առաջին օրէն 8,000 ղրուշի խնայողութիւն մը կրցած է ընել, իսկ վերջերը յաջողեցաւ վարժապետանոցի փակմամբը 700 ոսկի խնայել, կեդրոնական ահագին ծախքը կիսել և տեսչութեանց և վարժարանաց մէջ կարեւոր խնայողութիւններ ի գլուխ հանել։

Այս յայտնութիւններէն զատ, պ. Ջերազ սրտիպուեցաւ յայտնել թէ պարոնները քննադատելի հաշիւներ տուած էին և թէ անոնք «մեր հաշիւները պատրաստ են» ըսելէ վեց ամիս յետոյ միայն կրցած էին յանձնել իրենց հաշուետոմարները, որք անկանոն, պակասաւոր, աւրուած, սրբուած և անմաքուր վիճակի մէջ էին հակառակ օրինաց և ուղղութեան, ինչպէս որ հեղինակներն իսկ զգալով՝ ետ առին այդ տոմարները և այսօր մաքուրը դնելու զբաղած են։

Մինչդեռ իրենց հաշիւները պատրաստ չէին, իրենք անամօթաբար կը հրատարակէին լրագրաց մէջ թէ պ. Նիկողոսեան կը սխալէր իրենց հաշիւներուն բացակայութիւնը դատապարտելով, վասն զի իրենց հաշուէկշիռը արդէն ներկայացուցած են եղեր, և այլն։ Ահա այսպիսի սրտախօսութիւններով կը խաբէին ազգը Կ. Պոլսոյ մէջ անդամ, ուր իրենց գործերը ծանօթ են ամենուն, և այսօր կը ջանան խաբել ռուսահայերը, վասն զի Տփխիսի մէջ ոչ ոք տեղեակ է իրենց մանրամասն արարքներուն և մեքենայութեանց։

Վերջերս կեդրոնական ժողովը հինգ անձերէ բաղկացեալ յանձնաժողով մ'ընտրեց այդ հաշիւները քննելու համար։ Երեսփոխանք զարմացան տեսնելով որ Սօսիւնի կուսակիցները կառաջարկէին որ հինգն ալ իրենցմէ առնուի, որպէս զի ներողամտութեամբ քննեն հաշիւներն։ Ահա վատութեան ապացոյց մ'ալ։ Եւ այսօր, խորամանկ հակառակորդի մը շնորհիւ, այդ քննիչները մեծաւ մասամբ Սօսիւնի բարեկամներէն կազմուած են, և անշուշտ բծախնդրութիւն չը պիտի ընեն....

Այս զեղծմանց մի մասը հրատարակուած է արդէն Մասիսի մէջ, «Ո՞վ է խեղաթիւրողն» վերնագրով չորս յօդուածի մէջ, հեղինակը մի առ մի երևան հանած է պ. Շիշմանեանի և ընկերաց ծանր խեղաթիւրումներն ու խարդախութիւնքը վարժապետանոցի խնդրոյն մէջ։

Այս խնդիրը բաւական ծանօթ է ռուսահայոց, վասն զի «Մշակ» և «Մեղու» արտատպեցին արդէն ներկայ վարչութեան տեղեկագիրը, որ կը պատմէ վարժապետանոցի թերութիւնքը։ Ընկերք, երբ պաշտօնակ եղան, շնորհիւ իրենց շռայլ վարչութեան՝ 400 ոսկի պարտք թողած էին այն դանձուն մէջ ուր 4,000 ոսկի պատրաստ գտած էին, և իրենց յաջորդները ի հարկէ ստիպեալ խնայողութիւն պիտի ընէին, ընկերութիւնը կործանումէ ազատելու համար. ուստի բնական էր որ այդ մեծածախ վարժապետանոցը զոհ երթար։ Ասկէ զատ, վարժապետանոցին մէջ իբր թէ բարձրագոյն գիտութիւններ կաւանդուէին այնպիսի աշակերտներու, որոնք մեծաւ մասամբ հարուստ կամ կարող ծնողաց զաւակ էին։ Իրենց հայրերը սովին ատեն ծանր գիներով ցորեն ծախած էին աղքատ Վանեցւոց, և այնպէս ահագին գումարներ կորզած։ Երբ այս անգութ հարուստները, որք Փեթրսպուրկի վաշխառուին հայրենակիցներն են, իրենց զաւակաց կը յատկացնէին փոքրիկ գիմնազիաներու հաւաքած կօպէկները Թիֆլիսի հոգեհանգիստներու մէջ, անդին Քուրդաստանի մէջ հազարաւոր հայեր քրդացած կը կորչէին, և Միացեալ ընկերութիւնը փող չէր ունենար որ երթար դպրոց բանալ այդ կորած, օտարացած և աղքատ հայ գիւղացիներու մէջ, և կը շարունակէր ստակ վատնել Վանայ մէջ, ուր արդէն 10-ի չափ ծբխական դպրոցներ կային և ուր ժողովուրդին 90%-ը կարդալ գրել գիտէ։ Ահա այս անհրաժեշտ պէտքին առջև Տնօրէն ժողովը պարտաւորուեցաւ կարօտին հացը յափշտակել հարուստի կոկորդէն։

Այս կարգադրութիւնը Սօսիւնի կուսակիցներու գործին չէր գար, վասն զի կը յայտներ թէ իրենք տարիներով կատարած էին այդ անիրաւութիւնը և աղքատաց ձրի կրթութեան համար հաւաքված լումաներու ամբարտաւանութեանը գործածած էին։ Այս է պատճառ իրենց ընդդիմութեան, մինչդեռ Ցաճկաստանի բոլոր ողջամիտ և արդարասէր հայերը, Ներսէս պատրիարքէն սկսած, կը հաւանին պ. Ջերազի առաջարկին և կը դատապարտեն պ. Շիշմանեանի և ընկերաց անմտութիւնքը։

Այսպէս ուրեմն Միացեալ ընկերութիւնը ընդունեցաւ նախնական կրթութիւն տարածելու պռօկրամը, փակելով Վանայ մէջ ունեցած միակ բարձրագոյն կրթարանը, թէև անուամբ բարձրագոյն քան իրօք։ Միացեալ ընկերութիւնը կուզէ այսօր կարդալ, գրել և հաշուել սովրեցնել մի քանի հազար հայ գիւղացիներու, փոխանակ քառասուն հարուստ քաղաքացւոց աստղաբաշխութիւն և եռանկիւնաչափութիւն սովրեցնելու։

Իսկ արհեստական ուղղութեան գործը յանձնված է այժմ նորահաստատ «Ցնտեսագիտական միութիւն հայոց» անուն մի ընկերութեան, որ Ներսէս Պատրիարքի նախագահութեան տակ կազմվեցաւ «Մշակի» և պ. Նիկողոսեանի յօդուածներէն ցնցուած։ Այս ընկերութիւնը պիտի հոգայ Հայաստանի տնտեսական կացութիւնը, մինչդեռ Միացեալը լոկ կրթականին վրայ պիտի ամփոփէ իւր ոյժերը։ Ուրեմն այս երկու ընկերութիւնք արժանի են վայելել այսուհետև ամբողջ ազգին համակրանքը և աջակցութիւնը, մանաւանդ որ «Միացեալ ընկերութեանց» արդի վարչութիւնը անշահախնդիր անձերու յանձնված լինելով, հաշիւ մասին ոևէ կասկած չը կայ և հաշիւները կանոնաւորապէս չորս ամիս մի անգամ պիտի հրատարակուին, նախորդ վարչութեան հաշիւներու քննութենէն յետոյ։

Խնդրելով որ «Մշակի» անկողմնակալ ընթերցողաց ներկայացունէք «Միացեալ ընկերութեանց» արդի վիճակի այս մխիթարիչ պատկերն, ի հերքումն «Մեղուի» ստախօս թղթակիցներուն, կաղաչեմ, մեծապատիւ խմբագրապետ, որ ընդունիք խորին յարգանաց հաւաստիքը։

Ա. Բ. Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հոկտեմբերի 18-ին գերմանական պահպանողականները տօնեցին Լէյպցիգի մօտ եղած պատերազմի 68 ամեակը։ Այդ առիթով «National Zeitung» լրագիրը նկատում է։ «Հարց է ծագում, արդեօք ինչ օգուտ քաղեցին պահպանողականները այդ պատերազմի հետևանքներից Գերմանիայի ազատութեան համար։ 1813 թուականի հոկտեմբերի 13-ից յետոյ այդ պատերազմի գլխաւոր առաջնորդները հեռացրած էին գործերից։ Գարդենբերգ զրկվեցաւ իր ազդեցութենից, Վիլհելմ Հումբոլդ ստիպված էր հրաժարական տալ, Ֆելդմարշալ Գնէյզենաու և անկախութեան համար ոգևորութեամբ կուռողները հալածանքների ենթարկվեցան, մարմնամարզական կլուբները ծածկվեցան։ Հարիւրաւոր կեանք փըչացաւ։ Երիտասարդներին, որոնց միակ յանցանքը ազգասիրական երգերի երգելն էր, մի քանից միւս բանտն էին թրևում։ Վիլհելմ III պահպանողականների ազդեցութեան տակ չը կատարեց իր խոստումը պետական գործիչներին գումարելու մասին։ Հրատարակվեցան յայտնի հրամանները համալսարանների և մամուլի դէմ։ Դա առաջին և վերջին յետադիմութիւնը չէր Գերմանիայի մէջ, բայց նա ամենաանգութ և երկարատև էր։ Ցարաբաղդաբար այդպիսի գործերը շուտով են մոռացվում հետևեալ սերունդներից։»

—Պրոֆէսսոր Մոմզէն իր ընտրողներին գրած մի նամակով սաստիկ քննադատում է կառավարութեան այժմեան գործունէութիւնը։ Նա ասում է, որ այդ գործունէութիւնը ուղղված է բոյխոտագի, կուսակցութիւնների համայնքների և պաշտօնական անձանց դէմ։ Նամակի հեղինակը ցաւակցութիւն է յայտնում, որ գերմանական ազգը ստիպված է պաշտպանել իր գոյութիւնը այն մարդու դէմ, որ նրա ազատողը և մինչև անդամ «ստեղծողն» է եղել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 Հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 25 կ., երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 91 ռ. 87 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 221 ռ. 50 կ., երկրորդ 215 ռ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ., երկրորդ 90 ռ. 12 կ., երրորդ 90 ռ. 12 կ., ոսկի 7 ռ. 66 կ.։ Ռուսաց 1 ռ. Լօնդօնի վրա արժէ 25,81 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 220 մարկ 25 պֆ., փարիզի վրա արժէ 272 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 Հոկտեմբերի։ Հոկտեմբերի 17-ին տեղի ունեցաւ բանուորների համար պետական գանձարաններ կազմակերպող յանձնաժողովի առաջին նիստը։ Սեմէնով նախագահը յայտնեց իր համակրութիւնը այնպիսի կազմակերպութեան, որ միջոց կը տայ աշխատողներին, որոնք կը կամենան մի քանի տարվայ համար թոշակ ստանալ, կամաւոր կերպով մասնակցել գանձարաններին։ Պարտադիր օգնութեան հետ միասին, թոյլ է տրվում և բարեգործութիւնը յօգուտ գանձարանների։ „Порядокъ“ հաղորդում է որ նահանգական իշխական ինստիտուտներին թոյլ է տուած ունենալ երթևեկ աշակերտուհիներ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ և ԻՏԱԼԵՐԷՆԻ դասեր։ ՀԱՐՑՆԵԼ „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ։

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ դասեր ընտանիքներում։ ՀԱՐՑՆԵԼ „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ։

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ թէյ առանց ԹՂԹի և ԱՐՃՃի։

70—100

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

ՖԻԶԻՔԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Զեռնարկ հայ տղայոց և օրիորդաց ուսումնարանների համար, աշխատասիրութիւն Աւետիքի Տէր Յակովբեանց.

գինն է 60 կոպէկ։

Ցանկացողք ստանալ պէտք է դիմեն ուղղակի աշխատասիրողին „Тифлисъ. Армянская семинарія Нерсесянъ“ կամ Тифлисъ „Центральная книжная торговля“.

Ա. Տէր-Յակովբեանց

5—5

---

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Մամուլի տակից դուրս եկաւ ԹՂՈՒԿ գործ. Ալֆ. Դոդէի, թարգմ. Հ. Տէր-Միքայէլեանց։ Ծախվում է կենտրոնական և կովկասեան գրախանութներումը ՅՕԳՈՒՏ Թիֆլիսի ըէալական ուսումնարանի հայ աշակերտների ապագայ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ։ Օտար քաղաքացիք կարող են ուղղակի դիմել այս հասցէով։ Въ Тифлисъ. Реальное Училище. Г. Теръ-Микелову.

ԾԱԽՈՒՄ Է

Զեռնտու գնով, երկու յարկանի տուն Օլգինսկի փողոցի վրա, Պովիվալնի ինստիտուտին չը հասած։

6—10

ՀԱՆՔԱՅԻՆ ԲԱՂՆԻՍ

ԻՎԱՆ ՄԻՆԷՑԻՉ ՄԻՐԶՕԵՎԻ ՈՐԴԿԵՐԱՆՑ հինգշաբթի հոկտեմբերի 22-ին կը բացվին նոր շինված հասարակաց կանանց և տղամարդկերանց ԲԱՂՆԻՍՆԵՐ, նոյնպէս և առանձին համարներ։ Առանձին համարի գինը 80 կ. և 1 ր. ժամը։ Ընտանիքի համար ժամը 1 ր. 50 կ.

2—3

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կոնֆեկտներ, ԿԱԿԱՕ, բրինձ, ամանդէն, բոկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբրիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտուվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականներին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է ԹԷՅ. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹի։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ըէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼ-ԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, պլօմներ կիսապնով, ֆիլտրաներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և ըէվոլվերների Թիֆլիսում։

36—100

Դուրս եկաւ մամուլի տակից պ. Ղ. Աղայեանցի մի նոր աշխատութիւնը

ԱՆԱՀԻՏ

ՀԻՆ ՋՐՈՑՑ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ։ Գինն է 50 կոպ. ցանկացողք կարող են դիմել մեզ մեր տպարանի հասցէով։

Մովսէս Վարդանեանց

Անգլիական երկաթեայ պատենտած ԷՐՕՐՆԵՐ, լեմէխների պաշարով Բանսօմի ֆաբրիկայից, ծախվում են գործարանակա գներով ՊԻՎՕՎԷՐՕՎԻ և ԳՕԼԴԻԼԻՍՏԻ կանտօրայում Թիֆլիսում, Դվօրցօվայի փողոցի վրա Էրծրունու գալէրէում № 188

7—20 (2)

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Մինքայէլ Տէր-Նիկողոսեանի պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով։ Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

88—150

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր., ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քոլոցներ 50 կ., պասեալա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ ըէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 -ֆունտ թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.։ ԵՐ-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ։

45—100

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ

Մի և նոյն տեղը ԹԻՆԱՅԻ ԻՒՂ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաչափ գէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ և հոտաւէտ ջրեր և այլն։

38—100

ԶԱՔԱՐԻԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՒԱՃԱՌԱՆՈՅԻ“ հրատարակութեամբ լոյս են տեսած հետևեալ ԴԱՍԱԿԱՆ և ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐԵԱՆՔԸ։

1	Սիմէօնեանց Մ. ժողովածու թուաբանական խնդիրների մ. ա. (ամբողջ թուեր)	50 կ.
2	» նոյնը մասն բ. (կոտորակներ)	50 »
3	» դասագիրք թուաբանութեան	65 »
4	Ղուկասեանց դասագիրք ընթերցանութեան	40 »
5	» » ընդհանուր պատմութիւն հին դարը մ. ա	80 »
6	Սիմէօնեանց Պ. Սրբազան պատմութիւն հին կտակարանի հ. ա	60 »
7	» » » նոր կտակարանի հ. բ	60 »
8	Տէր Ակոբեանց դասագիրք ռուսաց լեզուի	60 »
9	» ընթերցարան մասն առաջին	25 »
10	» դասատետր աղօթից	7 »
11	Զ. Գրիգորեանց մարդակազմութիւն	50 »
12	Սիմէօնեանց Ն. դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան հ. ա. մասն նախագիտելիք 5 պատկերով	35 »
13	— Նոյնը հ. բ. մասն ուսումնական և բնական 31 պատկերով	60 »
14	— — հ. գ. մասն քաղաքական	60 »
15	Բահաթրեանց քերականութիւն աշխարհիկ լեզուի	25 »
16	Երզնկեանց մանկական երգարան	20 »
17	— Զայնագրեալ մանկական երգարան	40 »
18	Գամառ Քատիպայ մանկական ոտանաւորներ և երգեր	20 »
19	Միրիմանեան թուաբանութիւն (թուեր)	12 »
20	Կօնդրատենկօի գծագրութեան օրինակներ	40 »
21	Բերական-Այբենարան հին ոճով	10 »
22	Տողացանցներ չորս երես թերթը	5 »
23	Շարժական տառեր մեծատառ և փոքրատառ թերթը	5 »
24	Ծերենցի երկունք թ. դարու	1 ր.— »
25	— Թէոդորոս Ռշտունի	1 ր.— »
26	— Թորոս Լեռնի (2-դ տպագրութիւն)	1 ր.— »
27	Թագւորեան փորձ լեզուագիտական հետազօտութեան	50 կ.
28	Նաղարեանց պօլուիմպերիալ—մանկական թատրոն	20 կ.
29	Աքիմեանց Նալա և Դամայանտի	20 կ.
30	Ա. Մ. ԵՊ. Դիւցազունք Հայկ, Արամ և Վահագն	30 կ.
31	Մանդինեանց Ազգային—ընտանեկան աշխարհ	25 կ.
32	— — — — — Դիւցազնական աշխարհ	30 կ.
33	— — — — — Նահապետական և հայրենի աշխարհ	65 կ.
34	Երզնկեանց դասագիրք Զայնագրութեան	30 կ.
35	Տէր-Աբրամեանց Հ. պատմութիւն 24 պատկերով	1 ռ.
36	Տնային բժշկական մարմնամարզութիւն	40 կ.

Վերոյիշեալ գրքերը տասնից աւելի առնողներին 20% զիջումն կը լինի գինը կանխիկ վճարողին։

18—20

Дозволено цензурою, Тифлисъ 22 Октября 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.